103	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Որոշման դրույթների համապատասխանեցում «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
104	«Արցախի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
105	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	«Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն				
106	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
Արցախի Հանրապետության ոստիկանություն				
107	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 94 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	ԱՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների անվանումների համապատասխանեցում ԱՀ Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-103-Ն հրամանագրին	Առաջին եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
108	««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Օրենքում առկա բացթողումների և հակասությունների վերացում	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
109	««Ոստիկանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Օրենքի դրույթների համապատասխանեցում ԱՀ Սահմանադրությանը	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
110	««Ոստիկանությունում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Օրենքի դրույթների համապատասխանեցում ԱՀ Սահմանադրությանը	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

111	«Արցախի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2019 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում և այդ նպատակով պետական մարմինների համակարգված գործունեության ապահովում	Չորրորդ եռամսյակ	ԱՀ պետական բյուջե
Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն				
112	«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի N 234 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգի և ծրագրի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին 2. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման գործընթացի հետ կապված հարաբերությունների կանոնակարգում	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
113	««Քաղաքացիական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	ԱՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում պետական կառավարման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ քաղաքացիական պաշտպանության բնագավառի խնդիրների և պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և քաղաքացիական պաշտպանության կառավարման համակարգի հետ կապված հարաբերությունների հստակեցում	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
114	«Փրկարարական ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Փրկարարական ծառայության կազմակերպման և անցկացման, փրկարարական աշխատանքների ղեկավարման ու իրականացման, տեղեկատվության հաղորդման կարգի, փրկարարական ծառայողների իրավունքների և պարտականությունների, խրախուսանքների, կարգապահական և նյութական պատասխանատվության ու դրանց կիրառման հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև ծառայության անցման հետ կապված այլ հարաբերությունների կարգավորում	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
115	«Քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքների և կազմակերպությունների ցանկը՝ ըստ վտանգավորության աստիճանի սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Ըստ վտանգավորության աստիճանի քաղաքացիական պաշտպանության խմբին դասվող տարածքների և կազմակերպությունների ցանկի, սկզբունքների սահմանում՝ այդ կազմակերպությունների գործունեության կայունության ապահովման և դրանց աշխատակիցների պաշտպանության կազմակերպման նպատակով	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

116	«Սեյմիկ պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններին, սեյմիկ անվտանգության ժամանակակից պահանջներին համահունչ և սեյմիկ պաշտպանության բնագավառի խնդիրներով պայմանավորված սեյմիկ պաշտպանության համակարգի մարմինների խնդիրների ու գործառույթների հստակեցում	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
117	«Արցախի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Արցախի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Արցախի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Արցախի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման գործող կարգի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
118	«Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Արցախի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակներում, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիազոր մարմնի կողմից էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման գործընթացի և յուրաքանչյուր տեսակի կապուղիների առաջնահերթ օգտագործման իրավունք ունեցող մարմինների ցանկի կանոնակարգում	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
119	«Արտակարգ իրավիճակի ռեժիմի մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Արտակարգ իրավիճակի պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ռեժիմի հետ կապված հարաբերությունների, արտակարգ իրավիճակներում իրականացվող միջոցառումների, դրանցում ուժերի և միջոցների ներգրավման կարգի ու պայմանների կանոնակարգում	Չորրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
Ստեփանակերտի քաղաքապետարան				
120	«Արցախի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման հետ կապված հարցերի կարգավորում	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
121	«Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություն սահմանելու կարգը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Համայնքում սոցիալապես անապահով և անվճարունակ բնակիչների օժանդակում	Երկրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
122	«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնելը	Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունների կարգավորում, ինչպես նաև այդ գործընթացի կազմակերպման սկզբունքների պարզեցում և հստակեցում	Երրորդ եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

ԱՐՑԱՄԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱՆ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մարտի 2018թ.

N 143-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ու մ է**:

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 10-ի «Ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմի տեխնիկական շահագործման կարգը հաստատելու մասին» N 413 որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն կարգի գործողությունը չի տարածվում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Արցախի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև դրանց շարժակազմի շահագործում, տեխնիկական սպասարկում ու նորոգում իրականացնող կազմակերպությունների վրա:»:

2) 13-րդ և 16-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ճանապարհային» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանության ճանապարհային» բառերով:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառման ենթակա ինքնազնայաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների, երկաթուղային տրանսպորտային միջոցների ու ջրային տրանսպորտային միջոցների ցանկերը, հաշվառման կարգերը և հաշվառման մատյանների ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 699 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված՝

1) N 2 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն կարգի գործողությունը չի տարածվում Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, Արցախի Հանրապետության ոստիկանությանը և Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը պատկանող ճանապարհաշինարարական և շինարարական տեխնիկայի վրա:»:

2) N 8 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն կարգի գործողությունը չի տարածվում Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությանը, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը և Արցախի Հանրապետության ոստիկանությանը պատկանող ջրային տրանսպորտային միջոցների վրա:»:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատ ձեռնարկատերերի և (կամ) կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 1-ի N 260 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 6-ի N 322 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 926-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի

ա. 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանության» բառերով,

բ. Ձև N 1-ում, Ձև N 2-ում և Ձև N 3-ում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերով,

գ. Ձև N 1-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 մարտի 2018թ.

N 144-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ յ մ մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի «Միջին ու բարձր ճնշման զազի համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» N 18 որոշմամբ հաստատված՝

1) թիվ 1 հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով:

2) թիվ 3 հավելվածում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «ԼՂՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի «5.8 ՄՎՏ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգը հաստատելու մասին» N 19 որոշմամբ հաստատված՝

1) թիվ 1 հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով:

2) թիվ 3 հավելվածում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «ԼՂՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 28-ի «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը հաստատելու և Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի թիվ 232 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 379 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 57-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով.

2) 7-րդ և 8-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների» բառերով.

3) ենթահավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ընկերության «Քաշաթաղ» մասնաձյուղ									
Ընդամենը									

Ծանոթություն _____

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ _____

ԻՐԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆ _____

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ _____

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 մարտի 2018թ.

N 155-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. 2018 թվականի ապրիլի 2-ի աշխատանքային օրը տեղափոխել 2018 թվականի ապրիլի 14-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 6-Ն

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել դատական կարգադրիչների վարքագծի կանոնները՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**20 փետրվարի 2018թ.
ք. Ստեփանակերտ**

ԿԱՆՈՆՆԵՐ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՂԻՉՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ

1. Սույն կանոններով սահմանվում են դատական կարգադրիչների վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դրանից դուրս:

2. Դատական կարգադրիչների վարքագծի կանոնները, բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված, ծառայողական կարգապահության, վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են: Դատական կարգադրիչների վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատական կարգադրիչների համար:

3. Դատական կարգադրիչը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են հեղինակագրել Արցախի Հանրապետության պետական իշխանությունը և պետական մարմիններին կամ վտանգել պետական իշխանության իրականացումը: Ծառայությունն իրականացնելիս դատական կարգադրիչի գործողությունները պետք է ուղղված լինեն Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, և դրանց հասնելու միջոցները պետք է լինեն անհրաժեշտ, պիտանի և չափավոր:

4. Դատական կարգադրիչը ծառայողական և արտածառայական հարաբերություններում պարտավոր է ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով, հարգել մարդու արժանապատվությունը, անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը, բացառել ցանկացած տիպի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումներ կոլեկտիվի անդամների, Արցախի Հանրապետության դատարաններ և դատական ղեկավարամենտ մուտք գործած անձանց հետ և այլ շփումներում:

5. Դատական կարգադրիչը դատական ծառայողի, դատավորի հետ շփվելիս կամ դատական իշխանության մասին խոսելիս իր վարքագծով, դիմելաձևով պետք է արտացոլի մեծ հարգանք դատական իշխանության կրողների նկատմամբ:

6. Դատական կարգադրիչները պարտավոր են՝ ծառայության ներկայանալ Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված համազգեստով և պատշաճ արտաքին տեսքով: Ոչ պատշաճ արտաքին տեսքով ծառայության ներկայացած կարգադրիչներին չի թույլատրվում անցնել ծառայության:

7. Դատական կարգադրիչը պարտավոր է ինչպես անձամբ պահպանել վարքագծի կանոնները, այնպես էլ հետամուտ լինել իր գործընկերների կողմից դրանց պահպանմանը:

8. Դատական կարգադրիչն ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դրանից դուրս, պարտավոր է համապատասխան իրավասություն չունեցող անձին չիրապարակել աշխատանքի ընթացքում ձեռք բերած մարդու անձնական և ընտանեկան, պետական, ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնի, ինչպես նաև ոչ գաղտնի տեղեկատվությունը, որոնք կարող են վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը, հեղինակությանը և գործարար համբավին՝ անկախ այդ տեղեկատվության պաշտոնական թե ոչ պաշտոնական աղբյուրից ստացված լինելու հանգամանքից: Սույն կանոնը չի վերաբերում օրենքով սահմանված կարգով հայցվող տեղեկատվության և դրա տրամադրման կարգին:

9. Դատական կարգադրիչը պարտավոր է չօգտագործել իր պաշտոնական դիրքը կամ դատական իշխանության հեղինակությունն իր կամ այլ անձանց համար

արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

10. Ծառայողական պարտականություններն իրականացնելիս դատական կարգադրիչը պետք է գրավի ակտիվ դիրք, բարձր գնահատի ծառայողական շահը:

11. Դատական կարգադրիչն իր ամենօրյա գործառնություններում և շփումներում պետք է լինի քաղաքականապես չեզոք, զերծ մնա այնպիսի գործողություններից և շփումներից, որոնք կարող են ստեղծել քաղաքական կողմնապահության տպավորություն:

12. Դատական կարգադրիչը դատավարության մասնակիցների և այլ անձանց հետ շփումներում որոշակի կամ հնարավոր դատական վեճերով (գործերով) չպետք է նրանց ուղղորդի անձնավորված փաստաբաններ և ներկայացուցիչներ ունենալուն, չպետք է ընդունի որևէ նվեր կամ այլ շահավետ առաջարկ:

13. Դատական կարգադրիչը պարտավոր է պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԴԵԿԱՎԱՐ**

Գ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 7-Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 03-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. մարտի 20-ի «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետից հանել «ավագ» բառը, իսկ 20-րդ և 25-րդ կետերում «դատարանի» բառից հետո լրացնել «աշխատակազմի» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**20 փետրվարի 2018թ.
ք. Ստեփանակերտ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ**

Արցախի Հանրապետության Քաղաքացիական գործ ԸԻԴՆ 2039/02/16թ.
վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴՆ N2039/02/16թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան
Կ.Սաղյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

21-ին փետրվարի 2018թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
մասնակցությամբ՝ դատավորներ

Ա. Աբրահամյանի
Ի. Կարապետյանի
Վ. Հովսեփյանի
Գ. Գրիգորյանի
Ա. Հայրապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի ընդդեմ Լեոնիդ Սուրենի Աղաջանյանի՝ 20.000 ԱՄՆ դոլարը, հաշվեգրված 500.000 ՀՀ դրամ տոկոսագումարը և 5.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի ուժով հաշվեգրվելիք տոկոսագումարը բռնագանձելու և ըստ հակընդդեմ հայցի Լեոնիդ Աղաջանյանի և նրա ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի՝ փոխառության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 12-ի որոշման դեմ հայցվոր Ռուզաննա Խասապետյանի և նրա ներկայացուցիչ Սուրեն Միրզոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Հայցվոր Ռուզաննա Խասապետյանն /այսուհետ՝ Հայցվոր/ ու նրա ներկայացուցիչներ Աշոտ Ապրեսյանը և Սուրեն Միրզոյանը 2016 թվականի սեպտեմբերի 1-ին հայցադիմում են ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան/ ընդդեմ Լեոնիդ Աղաջանյանի /այսուհետ՝ Պատասխանող/՝ 20.000 /քսան հազար/ ԱՄՆ դոլար պարտքի գումարը, հաշվեգրված 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ տոկոսագումարը, 2016թ. հունվար ամսից սկսած մինչև պարտքի լրիվ մարումը 15.000 ԱՄՆ դոլար

պարտքի գումարի նկատմամբ պայմանագրով սահմանված ամենամյա 1.8 տոկոսը և 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար պարտքի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները բռնագանձելու պահանջի մասին՝ այն հիմնավորմամբ, որ Պատասխանողն ավելի քան երեք ամիս չի վճարում պայմանագրով սահմանված տոկոսները, ինչպես նաև չի վերադարձրել փոխառության գումարից 5.000 ԱՄՆ դոլարը:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ 15.000 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ 2016թ. հունվարի 1-ից մինչև դատարան դիմելու օրը հաշվեգրված տոկոսների հաշվարկը չներկայացնելու և պահանջվող տոկոսների մասով օրենքով սահմանված չափով պետական տուրքը չվճարելու պատճառաբանությամբ:

Հայցվոր կողմը 2016 թվականի սեպտեմբերի 9-ին կրկին հայցադիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ ներառելով 500.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մեջ նաև մյուս պահանջները և չվճարելով որևէ ավել պետական տուրքի գումար: Այսինքն՝ խնդրել է «Լ.Աղաջանյանից բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլար պարտքի գումար և 500.000 ՀՀ դրամ չվճարված տոկոսներ /որի մեջ մտնում է՝ 2016թ. հունվար ամսից սկսած մինչև պարտքի լրիվ մարումը 15.000 ԱՄՆ դոլար պարտք գումարի պայմանագրով սահմանված ամենամյա 1.8 տոկոսը և 5.000 ԱՄՆ դոլար պարտքի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ՀՀ քաղ. օր-ի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ/, ինչպես նաև 199.900 ՀՀ դրամ մուծված պետական տուրքը:»:

Սկզբնական հայցի դեմ Պատասխանողը և նրա ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը 2016 թվականի նոյեմբերի 24-ին ներկայացրել են հակընդդեմ հայց՝ փոխառության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր՝ Մ.Ավանեսյան/ 2017 թվականի փետրվարի 3-ի վճռով սկզբնական հայցը բավարարվել է մասնակիորեն, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, ԱՀ վերաքննիչ դատարանը /դատավորներ՝ Հ.Խաչատրյան, Ն.Գրիգորյան, Կ.Սաղյան/ /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2017 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2017 թվականի մայիսի 20-ին վճռաբեկ բողոք է բերել Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Գերագույն դատարանի 2017 թվականի հունիսի 20-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարվել է՝ Վերաքննիչ դատարանի 2017 թվականի ապրիլի 20-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին աստիճանի դատարանի /դատավոր Ռ.Ջհանգիրյան/ 2017 թվականի հոկտեմբերի 5-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Վճռվել է Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հոգուտ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի գանձել 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ որպես փոխառության գումար, 302.600 ՀՀ դրամ՝ որպես մինչև 01.09.2016թ. հաշվարկված փոխառության տոկոսագումար: Վճռվել է նաև Լ.Աղաջանյանից հոգուտ Ռ.Խասապետյանի գանձել 01.09.2016թ.-ից մինչև 07.12.2016թ. 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող և փոխառության պայմանագրով նախատեսված ամսական 1.8 տոկոսը, 08.12.2016թ.-ից մինչև 07.05.2017թ. 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող և փոխառության պայմանագրով նախատեսված ամսական 1.8 տոկոսը, և 08.05.2017թ.-ից մինչև փոխառության գումարի վերադարձման օրը 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվող քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տոկոսները: Մնացած մասով հայցը մերժվել է:

2017 թվականի նոյեմբերի 6-ին Պատասխանողի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը բերել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բողոքարկվող մասով բեկանել Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը և այն փոփոխել՝ կայացնելով դատական ակտ՝ հակընդդեմ հայցի բավարարման, իսկ սկզբնական հայցի մերժման մասին:

Վերաքննիչ դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է. Ռուզաննա Խասապետյանի հայցը մերժվել է, իսկ Լեոնիդ Աղաջանյանի հակընդդեմ հայցը՝ բավարարվել: Կողմերի միջև 11.04.2012թ. կազմված փոխառության պայմանագիրը համարվել է չկնքված:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ս.Միրզոյանը 2018 թվականի հունվարի 10-ին բերել են վճռաբեկ բողոք:

Միաժամանակ Հայցվորը և նրա ներկայացուցիչը վճռաբեկ բողոքին կցել են 30.000 ՀՀ դրամ պետական տուրք վճարված լինելու մասին անդորրագիրը և ներկայացրել միջնորդություն՝ սահմանված պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգելու մասին, այն հիմնավորելով իրենց ֆինանսական ծանր դրությամբ:

Գերագույն դատարանը 2018 թվականի հունվարի 26-ի որոշմամբ բողոքաբերների միջնորդությունը բավարարել է. վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի չվճարված մասի վճարումը հետաձգել է և վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Լ.Աղաջանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը որոշումը կայացրել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահանջների կոպիտ խախտմամբ,

ինչն ազդել է գործի ելքի վրա: Վերաքննիչ դատարանը թույլ է տվել առերևույթ դատական սխալ, որը դատական ակտի բեկանման և փոփոխման հիմք է:

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 49-րդ հոդվածների, 121-րդ հոդվածի 3-րդ մասի, 122-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասի, 450-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 408-րդ, 424-րդ, 877-րդ, 880-րդ հոդվածների պահանջները, անհիմն կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 305-315-րդ, 882-րդ հոդվածների պահանջները, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը և խախտվել Հայցվորի՝ Արցախի Հանրապետության օրենքներով երաշխավորված իրավունքներն ու շահերը:

Բողոքաբերները նշված պնդումը հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 877-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանն առանց որևէ նոր ապացույց հետազոտելու և առանց իրավական հիմնավորման, վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը, արժանահավատ է համարել իրականության հետ որևէ առնչություն չունեցող Պատասխանողի հորինած՝ համատեղ բիզնես ձեռնարկելու մասին փաստարկները /որոնք հերքվել են տարբեր դատական ատյաններում/: Վերաքննիչ դատարանը գնահատական չի տվել փոխառության գումարը ստանալու փաստը հավաստող Պատասխանողի կողմից տրված ստացականին, մինչդեռ վիճելի գումարը ստանալու փաստը հաստատել է նաև Պատասխանողը:

Բողոքաբերները, վկայակոչելով սույն գործով Վերաքննիչ դատարանի 20.04.2017թ. որոշումը, նշել են, որ դրա կայացմանը մասնակցել են նաև բողոքարկվող որոշումը կայացրած դատական կազմից երկու դատավորներ, որոնք կարծիք էին հայտնել և անհիմն համարել /ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1028-րդ հոդվածի վկայակոչմամբ/ Պատասխանողի՝ համատեղ բիզնես ձեռնարկելու մասին փաստարկը:

Ըստ բողոքի՝ Վերաքննիչ դատարանն օբյեկտիվ գնահատական չի տվել նաև Հայցվորի ցուցմունքի այն մասին, որ իր և Պատասխանողի կողմից փոխառության պայմանագիրը ստորագրելուց հետո, երբ ամուսինը և Պատասխանողը սկսել են հաշվել փոխառության գումարը, ինքը սենյակից դուրս է եկել միջանցք: Բողոքաբերի կարծիքով՝ այն փաստը, որ փոխառության գումարը Հայցվորն անձամբ չի փոխանցել Պատասխանողին, այլ վերջինս փոխառության գումարը ստացել է Հայցվորի ամուսին Սուրեն Միրզոյանից, Վերաքննիչ դատարանն անհիմն գնահատել է որպես անփողոթյան մասին վկայող հանգամանք:

Բողոքաբերների պնդմամբ՝ Պատասխանողի կողմից վիճելի գումարը ստանալու փաստը հաստատված է համարել նաև Վերաքննիչ դատարանը, բայց այն կապել է ինչ-որ համատեղ բիզնես ձեռնարկելու պատմության հետ:

Ըստ բողոքի՝ ստացական տալը պարտավոր անձի պարտքի ճանաչումը վկայող գործողություն է, որի առկայության պայմաններում էական է ոչ թե այն, թե այդպիսի գործողությունն ում ներկայությամբ կամ թե որտեղ է

կատարվել, այլ այն փաստը, որ պարտապանն ընդունել է /ճանաչել է/ իր պարտքը պարտատիրոջ հանդեպ:

Բողոքի հեղինակները նշել են նաև, որ Առաջին աստիճանի դատարանը, օբյեկտիվ գնահատական տալով գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներին, հիմնավոր եզրահանգել է, որ Հայցվորն իր ամուսնու՝ Ս.Միրզոյանի փոխառության գործարքից բխող գումարը Պատասխանողին հանձնելու գործողություններին հավանություն է տվել, հետևաբար, փոխառության հարաբերությունն առաջացել է Հայցվորի և Պատասխանողի միջև: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, սակայն Վերաքննիչ դատարանն անհիմն եզրակացրել է, որ, քանի որ փոխառության գումարը Պատասխանողին անձամբ Հայցվորը չի հանձնել, այլ նրա ամուսինը, ապա հայցվոր Ռ.Խասապետյանը շահագրգիռ անձ չէ, և Հայցվորի և Պատասխանողի միջև փոխառության հարաբերություններ չեն ծագել, ինչը և դիտարկել է որպես փոխառության պայմանագրի անվավերության հիմք: Դրանով Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի պահանջները, այն է՝ չի հիմնավորել իր հետևությունն այն մասին, որ ստորադաս դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն, որ Պատասխանողն իրականում ստացել է պայմանագրում նշված գումարը, և որ Պատասխանողի նախաձեռնությամբ, որպես փոխառության պայմանագրի երաշխիք, Հայցվորին օտարվել է հողատարածք, որի վերադարձելիության վավերապայմանները սահմանվել են կողմերի միջև կնքված՝ 11.04.2012թ. փոխառության պայմանագրով, և Պատասխանողը պայմանագրով սահմանված տոկոսագումարները մի քանի ամիս և՛ առձեռն, և՛ բանկային փոխանցումների եղանակով, վճարել է անձամբ Հայցվորին:

Մեջբերելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ, 450-րդ, 880-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերները եզրակացրել են, որ Վերաքննիչ դատարանը գործով ձեռք բերված ապացույցներին օբյեկտիվ գնահատական չի տվել և օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված փոխառության պայմանագիրն անհիմն ճանաչել է անվավեր այն դեպքում, երբ դատաքննությամբ հիմնավորվել է, որ Պատասխանողը ստացել էր փոխառության գումարը՝ ստորագրելով ստացականը, և պարտավոր էր այն հետ վերադարձնել:

Վճարելի բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերները հիմնավորել են նրանով, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որի արդյունքում խախտվել են Հայցվորի սահմանադրական իրավունքները և Հայցվորի համար առաջացրել ծանր հետևանք՝ նա զրկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 20.000 ԱՄՆ դոլար գումարից, և որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Գերագույն դատարանի նախադեպային որոշումներին, հետևաբար առկա է իրավունքի զարգացման և օրենքի մեկնաբանման խնդիր:

Վերագրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և Առաջին աստիճանի դատարանի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի պատասխանում Պատասխանողը խնդրել է վճռաբեկ բողոքը չընդունել Գերագույն դատարանի վարույթ, քանի որ այն չի համապատասխանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի պահանջներին, այն է՝ «թույլ է տրվել առերևույթ դատական սխալ»-ի տակ որևէ պատճառաբանություն բողոքում չի բերվել: Իր և Հայցվորի միջև «փոխառության» իրավահարաբերություն չի ծագել, ինքը փոխառության գումար չի ստացել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 11.04.2012թ. Հայցվորի և Պատասխանողի կողմից ստորագրվել է փոխառության պայմանագիր, որի համաձայն՝ Հայցվորը Պատասխանողին է հանձնում 20.000 ԱՄՆ դոլար՝ ձեռնարկատիրական գործունեության ծավալներն ավելացնելու նպատակով, իսկ Պատասխանողը պարտավորվում է փոխառության գումարի նկատմամբ Հայցվորին վճարել ամսական 1.8 տոկոս տոկոսադրույքով տոկոսներ /որը կազմում է 360 ԱՄՆ դոլար/ և փոխառության գումարը վերադարձնել հետևյալ եղանակով՝ 1/ մինչև 7.12.2015թ.՝ 5.000 ԱՄՆ դոլար, 2/ մինչև 7.12.2016թ.՝ 10.000 ԱՄՆ դոլար, 3/ մինչև 7.05.2017թ.՝ 5.000 ԱՄՆ դոլար /հատոր 1-ին, գ.թ.16-17, 31-32/:

2. 11.04.2012թ. պայմանագրին կից 11.04.2012թ. ստացականի համաձայն՝ Պատասխանողը Հայցվորից ստացել է 20.000 ԱՄՆ դոլար:

3. 11.04.2012թ. փոխառության պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ փոխառության գումարը հետ վերադարձնելուց հետո փոխատուն պարտավորվում է ք. Ստեփանակերտ, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը կողմերի համաձայնությամբ գնահատվել է 5.000 /հինգ հազար/ ԱՄՆ դոլար, հանձնել Պատասխանողին՝ Լ.Աղաջանյանին, իսկ պայմանագրի 4.4 կետի համաձայն՝ նշված տարածքի հարկերը, տուրքերը, գրանցման հետ կապված ծախսերի վճարումը, մինչև փոխառության գումարի լրիվ հետ վերադարձնելը, կատարում է Լ.Աղաջանյանը՝ իր անձնական միջոցներով:

4. ԱԲ N 028250 ամուսնության վկայականի պատճենի համաձայն՝ Սուրեն Միրզոյանը և Ռ.Խասապետյանը 5.03.1993թ. գրանցել են ամուսնությունը /հատոր 1-ին, գ.թ.64/:

5. Անշարժ գույքի առուվաճառքի 10.04.2012թ. պայմանագրի պատճենի համաձայն՝ պատասխանող Լ. Աղաջանյանի մտերիմ և աշխատակից Սամվել Հարությունյանը Ռուզաննա Խասապետյանին վաճառել է ք. Ստեփանակերտ, Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող շինարարական արտադրական բազան /հատոր 1-ին, գ.թ.78/։ Կողմերը հաստատել են, որ իրականում այդ գործարքը կնքվել է 11.04.2012թ. փոխառության պայմանագրի կատարումն ապահովելու համար, և Ռ.Խասապետյանը նշված գույքի դիմաց որևէ գումար չի վճարել:

6. Անշարժ գույքի առուվաճառքի 21.04.2017թ. պայմանագրի պատճենի համաձայն՝ ք. Ստեփանակերտ. Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող շինարարական բազան Ռ.Խասապետյանը վաճառել է 4.850.000 ՀՀ դրամով /կողմերի պնդմամբ՝ 10.000 ԱՄՆ դոլարով/ Ն.Հայրապետյանին և Հ.Զաքարյանին /հատոր 2-րդ, գ.թ.20/:

7. «Յունիբանկ» ԲԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից տրված «Հաշիվ գործարքներ» վերտառությամբ փաստաթղթի համաձայն՝ 01.01.12-31.12.12թ. Ռուզաննա Խասապետյանի բանկային հաշվին Լեոնիդ Աղաջանյանից փոխանցվել են՝ 09.07.12թ.-ին՝ 360, 20.08.12թ.-ին՝ 200, 12.09.12թ.-ին՝ 360, 10.12.12թ.-ին՝ 360 ԱՄՆ դոլարի չափով գումարներ /հատոր 1-ին, գ.թ.110/:

8. Հայցվորի ներկայացուցիչ՝ նրա ամուսին Ս.Միրզոյանի կողմից միակողմ կազմված հաշվետվության համաձայն՝ 31.08.2016թ. դրությամբ տոկոսների գծով պարտքը կազմում է 490.600 ՀՀ դրամ, որից պայմանագրային տոկոսները կազմում են 302.600 ՀՀ դրամ, իսկ 01.01.2016թ. մինչև 01.09.2016թ. բանկային տոկոսի հաշվառմամբ տոկոսները կազմում են 188.000 ՀՀ դրամ /հատոր 1-ին, գ.թ.36/։ Ըստ Ռ.Խասապետյանի հայցային դիմումի՝ Պատասխանողը պարտավոր էր մինչև 07.12.2015թ. կատարել իր դրամական պարտավորությունը, բայց չի կատարել, որի դիմաց պարտավոր է վճարել բանկային տոկոսներ, խնդրում է նրանից բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ՝ չվճարված տոկոսներ /հատոր 1-ին, գ.թ. 28-30/:

9. Պատասխանող Լ.Աղաջանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի՝ Գերագույն դատարանին հասցեագրված 2017 թվականի մայիսի 29-ի դիմումի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը սկզբնական հայցվորը դիտարկել էր որպես փոխառության պայմանագրի ապահովության միջոց, 21.04.2017թ. 10.000 ԱՄՆ դոլարով օտարվել է։ Նշված դիմումում Պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է գույքի վաճառքի արժեքի չափը կրկին չբռնագանձել Պատասխանողից /հատոր 2-րդ, գ.թ.18/։ Հայցվոր կողմը դատական նիստերի ժամանակ խնդրել է նշված գումարը հաշվանցել պարտքի գումարին։

10. Պատասխանողը, ներկայացրած հակընդդեմ հայցում, ընդունել է, որ Հայցվորի ամուսնուց ստացել է 3 միլիոն ՀՀ դրամ և 12.000 ԱՄՆ դոլար, որոնք հիմնականում վերադարձրել է, հնարավոր է՝ որոշ գումար՝ մոտ 500-600 ԱՄՆ դոլար, պարտք մնացած լինել /հատոր 1-ին, գ.թ.55/:

11. Դատաքննությունների ընթացքում Հայցվոր կողմը բազմիցս առաջարկություններ է ներկայացրել՝ Պատասխանող կողմից 15.000 ԱՄՆ դոլար վերադարձնելու դեպքում, տոկոսագումարներից հրաժարվելու պատրաստակամության մասին։

12. Պատասխանողը դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել վիճարկվող պայմանագիրը և 20.000 ԱՄՆ դոլար ստանալու մասին ստացականն ոչ իր կողմից /կամ խաբեությամբ, բռնությամբ,.../ ստորագրված լինելու մասին, և որ ինքը պատշաճ կատարել է պայմանագրում նշված պարտավորությունը։

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով

նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն և Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատավորը գործը կամ հարցը /այսուհետ նաև՝ գործ/ քննում և լուծում է Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան, գործի հանգամանքների անաչառ վերլուծության վրա հիմնված իր ներքին համոզմամբ՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ...:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Գերագույն դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական հարցերը. 1/արդյո՞ք Հայցվորի և Պատասխանողի միջև ծագել են փոխառության իրավահարաբերություններ, 2/ արդյո՞ք ստորադաս դատարանները ճիշտ են կիրառել քաղաքացիական գործերով ապացուցման գործընթացին վերաբերող կանոնները, 3/ արդյո՞ք Առաջին աստիճանի դատարանը վեճը քննել է հայցադիմումի շրջանակներում, և արդյո՞ք դատարանն իրավասու էր քննել գործը հայցադիմումում չնշված ծավալով:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատական ակտերի բեկանման և փոփոխման հիմքերը սահմանված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով, որոնց համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝ 1/նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, 2/ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը, որոնք հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման:

Պարզելու համար, թե վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավո՞ր են, արդյո՞ք, թե՛ ոչ, և Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը ենթակա՞ է,

արդյոք, բեկանման, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում վերլուծել սույն գործով ծագած վեճերը կարգավորող իրավական նորմերը:

Այսպես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: ...:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրի հասկացությունը սահմանող 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պայմանագրի ձևը» վերտառությամբ 450-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային,... փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրի կողմից:

Փոխառության պայմանագրի բովանդակությունը, ձևը, պայմանագիրը խախտելու հետևանքները, պայմանագրի վիճարկումը բացահայտված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-882-րդ հոդվածներում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 876-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ /փոխառության գումարը/ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ...այլ փաստաթուղթ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Փոխառուի՝ փոխառության գումարը վերադարձնելու պարտականությունը» վերտառությամբ 879-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի /Փոխառուի կողմից փոխառության պայմանագիրը խախտելու հետևանքները/ համաձայն՝ «1. Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է:

2. Եթե փոխառության պայմանագրով նախատեսված է փոխառությունը վերադարձնել մաս առ մաս /տարածամկետ/, ապա փոխառուի կողմից փոխառության հերթական մասը վերադարձնելու համար որոշված ժամկետը խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի պահանջել վերադարձնելու փոխառության մնացած ամբողջ գումարը՝ հասանելիք տոկոսների հետ միասին:»:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով: Գրավոր ձևը պահպանված է համարվում նաև այն դեպքում, երբ փոխառուն ի հավաստումն փոխառության պայմանագրի փոխատուին տալիս է ստացական, ...կամ այլ փաստաթուղթ: Ստացականը կամ այլ փաստաթուղթը ստորագրվում է փոխառուի կողմից և ձեռք է բերում ապացուցողական նշանակություն: Քանի որ փոխառության պայմանագիրը դասվում է ռեալ պայմանագրերի շարքին, ապա պայմանագիրը կնքված է համարվում դրամ /կամ այլ գույք/ հանձնելու պահից:

Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսդիրը փոխառուին իրավունք է վերապահում վիճարկել փոխառության պայմանագիրը նրա «անփողության» պատճառով: Փոխառուին նման իրավունք վերապահելով՝ օրենքը միաժամանակ սահմանում է, որ չի թույլատրվում «անփողության» պատճառով վիճարկել փոխառության պայմանագիրը՝ հենվելով վկաների ցուցմունքների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի, ...կամ այլ ծանր հանգամանքների բերումով /881-րդ հոդվածի 2-րդ մաս/: Փոխառուն իր պայմանագրային պարտավորությունները պետք է կատարի պարտավորությունների կատարման մասին կանոնների պահպանմամբ: Այսինքն՝ փոխառուն պարտավոր է վճարել տոկոսները և մարել պարտքը օրենքով կամ պայմանագրով սահմանված ժամկետում: Փոխառության առարկան համարվում է վերադարձված այն փոխատուին

հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ սույն գործով Հայցվոր կողմը պետք է ապացուցի, որ իր և Պատասխանողի միջև օրենքի պահանջների պահպանմամբ կնքվել է վիճարկվող փոխառության պայմանագիրը ու Պատասխանողին տրամադրվել է պայմանագրում նշված գումարը, իսկ Պատասխանողը պետք է ապացուցի, որ նշված պայմանագիրը չի համապատասխանում օրենքի պահանջներին, և որ ինքն իրականում պայմանագրում նշված գումարը չի ստացել:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարանի խնդիրն է յուրաքանչյուր կոնկրետ իրավական խնդրի նկատմամբ կիրառել դրա առանձնահատկություններին համարժեք իրավական պահանջները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս՝ 1/ գնահատում է ապացույցները, 2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ փաստերն են ապացուցվել և որոնք չեն ապացուցվել, 3/ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա իրավական նորմերը, 4/ որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը...:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածը սահմանում է Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշմանը ներկայացվող պահանջները, այդ թվում հոդվածում նշվում է, որ որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի այն փաստերը, որոնք հաստատվել են դատարանի կողմից և վերաքննիչ բողոքում վիճարկվել են, և վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը սխալ է թույլ տվել՝ պատճառաբանելով նման եզրակացությունը և հղում կատարելով նման եզրակացության հիմքում ընկած ապացույցներին, ինչպես նաև այն փաստերը, որոնք հաստատել է վերաքննիչ դատարանը /230-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի «գ» և «ե» ենթակետերը/:

Գերագույն դատարանը փաստում է, որ վերոնշյալ հոդվածների մեկնաբանությունից բխում է, որ դատարանի առջև բոլոր դեպքերում խնդիր է դրված առավելագույնս պարզելու գործի իրական հանգամանքները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, փաստերի և իրավունքների՝ իրականությանը համընկնելը և կայացնելու դատարանում պարզված հանգամանքներին համապատասխան դատական ակտ: Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, դատարանը այդ խնդիրը լուծում է յուրաքանչյուր ապացույց գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատելու միջոցով: Դատարանի խնդիրն է պարզել, թե ինչ ապացույցների հետազոտմամբ է հնարավոր հաստատել կողմերի պահանջների և առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը

կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանը ճիշտ բաշխելով սույն գործով ապացուցման բեռը, եկել է այն հետևության, որ Հայցվորը պետք է ապացուցի, որ կնքվել է փոխառության պայմանագիրը և Պատասխանողին տրվել է պայմանագրում նշված գումարը, իսկ Պատասխանողը պետք է ապացուցի, որ պայմանագիր չի կնքվել կամ էլ պայմանագրի հիման վրա կազմված ստացականում նշված գումարն իրեն չի տրամադրվել, այսինքն, որ պայմանագիրն անփող է: Պատասխանողը պետք է ապացուցեր նաև, թե ինչքան գումար էր վերադարձրել Հայցվորի ամուսնուն /եթե ընդունել է, որ, իրոք, նրանից գումար է վերցրել/:

Ֆերագույն դատարանն արձանագրում է, որ դատաքնությունների ընթացքում հաստատվել են կողմերի միջև փոխառության պայմանագրի կնքման, Պատասխանողի կողմից Հայցվորի բանկային հաշվին որոշակի գումարներ փոխանցելու, որոշ գումարներ Հայցվորի ամուսնուն տրամադրելու /այն էլ՝ նաև վկայի միջոցով/ փաստերը: Պատասխանողը չի ապացուցել փոխառության պայմանագրի չկնքման փաստը:

Ֆերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի տրամաբանությունից բխում է, որ անփողության ապացուցման բեռը օրենքն իմպերատիվ կարգով դնում է փոխառուի վրա: Եթե պարզվում է, որ նա փող /գումար/ չի ստացել, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Այսինքն՝ պայմանագիրն անփողության հիմքով վիճարկելու հիմքում պետք է դրված լինի ընդհանրապես գումար չտրամադրելու կամ այն պայմանագրում նշվածից պակաս տրամադրված լինելու փաստը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, պատշաճ գնահատական չտալով Առաջին ատյանի դատարանի կողմից ձեռք բերված ապացույցներին, հաստատված է համարել այն փաստը, որ պայմանագիրը Հայցվորի հետ չի կնքվել, և որ Հայցվորը Պատասխանողին որևէ գումար չի տրամադրել, և որ գումարը տրամադրելու վերաբերյալ բոլոր համաձայնությունները ձեռք են բերվել Հայցվորի ամուսնու՝ Ս.Միրզոյանի հետ, և այդ հետևությունը դրել Առաջին ատյանի դատարանի վճռի բեկանման հիմքում: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը փաստել է, որ «Ինչ վերաբերում է 11.04.2012թ. կազմված պայմանագրի հիմքում ընկած իրական կողմերի իրական մտադրություններին ու դրանց առնչությամբ նրանց միջև ծագած վեճին, ապա նշվածը չի կարող սույն գործով քննարկման առարկա հանդիսանալ՝ շահագրգիռ անձի կողմից այդպիսի հայց դատարան ներկայացված չլինելու հիմնավորմամբ»: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, ի խախտումն վերը նշված հոդվածների պահանջների, անտեսելով գործով ձեռք բերված բավարար ապացույցները, մասնավորապես՝ գրավոր, որոնք վկայում են կողմերի միջև կնքված պայմանագրի վավերության, այն մասնակի կատարված լինելու մասին, հանգել է սխալ հետևության այն մասին, որ անփողության պատճառով պայմանագիրը Հայցվորի հետ համարվում է չկնքված, և մերժել սկզբնական հայցն ու բավարարել հակընդդեմ հայցը, միաժամանակ գործով շահագրգիռ կողմ համարելով Հայցվորի ամուսնուն՝ Ս.Միրզոյանին:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նման հետևությունն անհիմն է, չի բխում գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունից, իսկ Առաջին ատյանի դատարանի վճիռը նշված մասով օրինական, հիմնավորված և պատճառաբանված է:

Առաջին ատյանի դատարանը ճիշտ է եզրակացրել, որ կողմերի միջև ծագել են փոխառության հարաբերություններ, և ծագած իրավահարաբերությունների հիմքով ծագել է պարտավորություն, որը Պատասխանողը պատշաճ չի կատարել:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի վճիռը հայցադիմումում չնշված ծավալով հայցը բավարարելու մասով, հիմնավոր չէ:

Գերագույն դատարանը նման եզրակացության է գալիս ստորև բերված հիմնավորումներով:

Գերագույն դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ դատարանը գործը քննում է հայցի առարկայի և հիմքերի, հայցապահանջների չափի շրջանակներում, որոնք կարող են փոփոխվել միայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով նախատեսված կարգով: Դատարանը չի կարող առաջ քաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ սկզբնական հայցադիմումն Առաջին ատյանի դատարան է ներկայացվել 01.09.2016թ.՝ «Լ.Աղաջանյանից հօգուտ Ռ.Խասապետյանի 20.000 ԱՄՆ դոլար, 500.000 ՀՀ դրամ չվճարված տոկոսներ, 2016թ. հունվար ամսից սկսած մինչև պարտքի լրիվ մարումը 15.000 ԱՄՆ դոլար պարտք գումարի պայմանագրով սահմանված ամենամսյա 1.8 տոկոսը, և 5.000 ԱՄՆ դոլար պարտքի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները բռնագանձելու» մասին պահանջով /հատոր 1-ին, գ.թ 3-5/:

Նշված հայցադիմումն Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ Հայցվորը չի ներկայացրել տոկոսների հաշվարկը և պետական տուրք է վճարել միայն 20.000 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների համար:

Հայցվորը, առանց պետական տուրքի վերաբերյալ դատարանի պահանջը կատարելու, 09.09.2016թ. կրկին հայցադիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան, պահանջելով «Լ.Աղաջանյանից բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլար պարտքի գումարը և 500.000 ՀՀ դրամ չվճարված տոկոսներ /որի մեջ մտնում է՝ 2016թ. հունվար ամսից սկսած մինչև պարտքի լրիվ մարումը 15.000 ԱՄՆ դոլար պարտք գումարի պայմանագրով սահմանված ամենամսյա 1.8 տոկոսը և 5.000 ԱՄՆ դոլար պարտքի նկատմամբ դատարան դիմելու օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ/, ինչպես նաև 199.900 ՀՀ դրամ՝ մուծված պետական տուրքի դիմաց» /հատոր 1-ին, գ.թ. 28-30/:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցապահանջների չափը սահմանելը Հայցվորի իրավունքն է: Հետևաբար,

դատարանը պետք է հայցը քննէր հայցադիմումում նշված ծավալով: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը, դուրս գալով հայցի չափի շրջանակներից, ինքնուրույն որոշում է կայացրել բռնագանձել Պատասխանողից հայցադիմումում չնշված գումարները: Ուստի այդ մասով Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում Առաջին ատյանի դատարանի վճիռը և վճռաբեկ բողոքի պահանջը՝ Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բարձրացված՝ ամուսիններից մեկի փոխարեն մյուս ամուսնու կողմից պայմանագրով նախատեսված գումարը փոխանցելու հարցին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նշված իրավական նորմի մեկնաբանությունից բխում է, որ եթե այլ բան նախատեսված չէ, ապա ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե որ ամուսինն է ձեռք բերել, ստեղծվել է կամ պատրաստվել է երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված՝ հանդիսանում է ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը, օգտագործելը և տնօրինելը» վերտառությամբ 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ ...:

Նշված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ համատեղ սեփականության մասնակիցները, եթե այլ համաձայնություն չեն կայացրել, գույքը տիրապետում և օգտագործում են միասին, իսկ տնօրինումն իրականացվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը: Այսինքն՝ օրենսդիրն ըստ էության ամրագրել է ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ մյուս համասեփականատերերի համաձայնության և դրա տնօրինման գործարք կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Լիազորություն չունեցող անձի կողմից գործարք կնքելը» վերտառությամբ 319-րդ հոդվածը նույնպես սահմանում է, որ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայության դեպքում հետագայում գործարքին հավանություն տալը տվյալ գործարքով նրա համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում, փոփոխում և դադարեցնում...: Գերագույն դատարանն իրավաչափ է համարում Առաջին ատյանի դատարանի կողմից նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի կիրառումը, բացի դրանից, հիմնավոր է համարում Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է այն փաստը, որ և՛ Հայցվորը, և՛ նրա ամուսինը /գործով ներկայացուցիչ Ս.Միրզոյանը/ մասնակցել են

պայմանագրի կնքմանը, Հայցվորը ներկա է եղել պայմանագրի կնքման վայրում, թողել է գրասենյակն այն ժամանակ, երբ ամուսինը հաշվում էր փոխանցման ենթակա գումարը:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են հակընդդեմ հայցի հիմնավորումները, որոնք հիմնականում վերաբերում են վիճելի գումարը ոչ թե Հայցվորից, այլ նրա ամուսնուց՝ Ս.Միրզոյանից ստանալուն: Մինևույն ժամանակ Պատասխանողն ընդունել է, որ 3 մլն ՀՀ դրամ և 12.000 ԱՄՆ դոլար գումար է ստացել Ս.Միրզոյանից, և որ ինքն է ստորագրել փոխառության պայմանագիրը և ստացականը:

Ինչ վերաբերում է պարտավորությունը կատարելուց հետո Պատասխանողին վերադարձման ենթակա /սակայն Հայցվորի կողմից՝ օտարված/ Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքի արժեքի հաշվանցման վերաբերյալ կողմերի բարձրացված հարցին, ապա Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պայմանագրի մեկնաբանումը» վերտառությամբ 447-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: 2. Եթե սույն հոդվածի 1-ին մասում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:»:

Վերը նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական իրավահարաբերություններն այլ իրավահարաբերություններից տարբերվում են նախ և առաջ նրանով, որ /որպես կանոն/ կամային հարաբերություններ են: Այդ հարաբերությունների ձևավորման համար առավել կարևոր է մասնակիցների ազատ կամահայտնությունը, և եթե քաղաքացիական իրավահարաբերությունում իրավագոր կողմն իրավասու է պարտավոր անձից պահանջել որոշակի վարքագծի դրսևորում, ապա միայն նրանց միջև գոյություն ունեցող պայմանագրի ուժով կամ օրենքի պահանջով:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Գերագույն դատարանը, գործն ուղարկելով նոր քննության, իր 20.06.2017թ. որոշմամբ ընդգծել է, որ գործի նոր քննության ժամանակ պետք է հստակ որոշել մարման ենթակա գումարները, հաշվի առնելով բոլոր ապացույցները, այդ թվում՝ պայմանագրում նշված գույքի օտարումը: Այսինքն՝ Գերագույն դատարանը, փաստելով պայմանագրով պատասխանող Լ.Աղաջանյանին վերադարձման ենթակա գույքի օտարված լինելու հանգամանքը, հանգամալից նշել է, որ գործի նոր քննության ընթացքում պետք է հաշվի առնել գույքն օտարված լինելու փաստը, սակայն Առաջին ատյանի դատարանը Գերագույն դատարանի նշված դիրքորոշումն անտեսել է և որևէ ծանրակշիռ փաստարկ չի բերել իր

դիրքորոշումը հիմնավորելու համար, ինչը հակասում է Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ եթե դատարանը գործը քննելիս և լուծելիս շեղվում է Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումներից /այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանություններից/, ապա պետք է ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորի իր դիրքորոշումը:

Ինչպես պարզվել է սույն գործի նյութերով, և այն չի վիճարկվել որևէ մեկի կողմից՝ Աջափնյակ 17/2 հասցեում գտնվող անշարժ գույքը Հայցվորը 10.000 ԱՄՆ դոլարով վաճառել է: Այսինքն, այն գույքը, որը, ըստ կողմերի միջև կնքված պայմանագրի, պետք է վերադարձվեր Պատասխանողին, օտարվել է, և Հայցվորը ստացել է իր պարտքի մի մասի բավարարում: Դատաքննությունների ժամանակ Հայցվորը հայտարարել է, որ պատրաստ է հաշվանցել օտարված գույքի արժեքը: Պատասխանողի ներկայացուցիչը Գերագույն դատարանին հասցեագրած դիմումում խնդրել է գույքի վաճառքի արժեքի չափը կրկին չբռնագանձել Պատասխանողից /ինչը Գերագույն դատարանը դիտում է որպես պարտավորության մասնակի հաշվանցման մասին հայտարարություն/, և նշված հարցը քննության առարկա է դարձվել Գերագույն դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելիս /ինչպես նաև՝ Առաջին աստիճանի դատարանի կողմից/: Հետևաբար, նշված գումարը պետք է հաշվանցվի Պատասխանողի ունեցած պարտքի գումարին և նվազեցվի բռնագանձման ենթակա գումարի չափը, հակառակ պարագայում՝ պարտապանը կկրի բացասական հետևանքներ:

Վերը նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված լիազորությունը ու մասնակիորեն բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի որոշումը ու հայցը մասնակիորեն բավարարել, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ՝ առանց գործն ուղարկելու նոր քննության, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից և համահունչ է Արցախի Հանրապետության Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Հաշվանցելով պարտքի գումարին վերոնշյալ անշարժ գույքի օտարման արժեքը /10.000 ԱՄՆ դոլար/, Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 10.000 ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք ՀՀ դրամ և 500.000 ՀՀ դրամ, որը ներառում է 31.08.2016թ. դրությամբ տոկոսների գծով չվճարված

302.600 ՀՀ դրամը և 197.740 ՀՀ դրամը՝ պայմանագրային տոկոսների գումարի մյուս մասը:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1.Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: 2. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: 3. Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:»:

Սկստի առնելով, որ հայցը բավարարվում է մասնակիորեն, կողմերի միջև դատական ծախսերը պետք է բաշխվեն բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն վճարված և դատարանների որոշումներով հետաձգված պետական տուրքի գումարներից:

Հայցվոր Ռ.Խասապետյանի կողմից հայցադիմումի համար վճարվել է 199.900 ՀՀ դրամ /20.000 ԱՄՆ դոլար և 500.000 ՀՀ դրամ պահանջների համար/ և վճռաբեկ բողոքի համար՝ 30.000 ՀՀ դրամ, սակայն նա վճռաբեկ բողոքի համար պետք է վճարեր 323.600 ՀՀ դրամ /20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 3 տոկոսը + 500.000 ՀՀ դրամի 3 տոկոսը + հակընդդեմ հայցի համար 20.000 ՀՀ դրամ/: Պատասխանողի կողմից հակընդդեմ հայցի համար վճարվել է 4.000 ՀՀ դրամ, երկու վերաքննիչ բողոքների համար՝ 20.000-ական ՀՀ դրամ /40.000 ՀՀ դրամ/, վճռաբեկ բողոքի համար՝ 90.000 ՀՀ դրամ, մինչդեռ, երկու վերաքննիչ բողոքների համար Պատասխանողը պետք է հոգուտ պետական բյուջեի վճարեր 313.600-ական ՀՀ դրամ /ընդամենը՝ 627.200 ՀՀ դրամ/ /288.600 ՀՀ դրամ՝ 20.000 ԱՄՆ դոլարի դիմաց, + 15.000 ՀՀ դրամ՝ 500.000 ՀՀ դրամի դիմաց + 10.000 ՀՀ դրամ՝ հակընդդեմ հայցի համար/, իսկ վճռաբեկ բողոքի համար՝ 323.600 ՀՀ դրամ: Հետևաբար, Լ.Աղաջանյանից հոգուտ Ռ.Խասապետյանի պետք է բռնագանձել 104.950 ՀՀ դրամ /10.000 ԱՄՆ դոլարի և 500.000 ՀՀ դրամի 2 տոկոսը/՝ հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի դիմաց, իսկ հոգուտ Արցախի Հանրապետության՝ վերաքննիչ բողոքների համար՝ Վերաքննիչ դատարանի 07.03.2017թ. և 16.11.2017թ. որոշումներով հետաձգված պետական տուրքի գումարը, հաշվանցելով նրա կողմից վերաքննիչ բողոքների համար վճարված 40.000 ՀՀ դրամը /313.600 ՀՀ դրամ -20.000 ՀՀ դրամ, 313.600 ՀՀ դրամ -20.000 ՀՀ դրամ/, ընդամենը 298.600 ՀՀ դրամ, վճռաբեկ բողոքների համար՝ 268.600 ՀՀ դրամ, հաշվանցելով նրա կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված 90.000 ՀՀ դրամ պետական տուրքը: Ռ.Խասապետյանից հոգուտ Արցախի Հանրապետության՝ բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն ենթակա է բռնագանձման՝ վերաքննիչ բողոքների համար՝ 288.600 ՀՀ դրամ /10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 6 /3+3/ տոկոսը/ և վճռաբեկ բողոքների համար՝ 258.600 ՀՀ դրամ /10.000 ԱՄՆ դոլարի 6 տոկոսը, հաշվանցելով վճարված 30.000 ՀՀ դրամ պետական տուրքը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 12-ի որոշումը և այն փոփոխել, հայցը բավարարել մասնակիորեն: Բռնագանձել Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հոգուտ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի 10.000 /տասը հազար/ ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար և 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես տոկոսների գումար:

Լեոնիդ Սուրենի Աղաջանյանի հակընդդեմ հայցը մերժել:

2. Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հոգուտ Ռուզաննա Մոխսեյի Խասապետյանի բռնագանձել 104.950 /հարյուր չորս հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Լեոնիդ Սուրենի Աղաջանյանից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձել 298.600 /երկու հարյուր ինսունուր հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար սահմանված և ԱՀ վերաքննիչ դատարանի 07.03.2017թ. ու 16.11.2017թ. որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար, 268.600 /երկու հարյուր վաթսունուր հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքների համար սահմանված և ԱՀ Գերագույն դատարանի 02.06.2017թ. ու 26.01.2018թ. որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար:

4. Ռուզաննա Խասապետյանից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձել 288.600 /երկու հարյուր ութսունուր հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար սահմանված և հետաձգված պետական տուրքի գումար, 258.600 /երկու հարյուր հիսունուր հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքների համար սահմանված և հետաձգված պետական տուրքի գումար:

5. Լեոնիդ Աղաջանյանի գույքի կամ դրամական միջոցների վրա՝ որպես հայցի ապահովման միջոց դրված արգելանքը պահպանել մինչև որոշման կատարումը:

6. Որոշումը կամովին չկատարելու դեպքում՝ այն կկատարվի հարկադիր կարգով՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

7. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

Արցախի Հանրապետության Բաղաքացիական գործ ԸԻԴ 2624/02/17թ.
վերաքննիչ դատարանի որոշում
Բաղաքացիական գործ ԸԻԴ 2624/02/17թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Աբրահամյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան
Ն.Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 5-ին մարտի 2018թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը /այսուհետ՝
Գերագույն դատարան/՝ վճռաբեկության կարգով.
նախագահությամբ՝ Ն.Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ Վ.Հովսեփյանի
Ա.Աբրահամյանի
Ի.Կարապետյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության ընդդեմ Գագիկ Յուրիի Հայրապետյանի և Մերուժան Հրաչիկի Բաբայանի՝ 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ և 2017 թվականի օգոստոսի 10-ից մինչև պարտավորության փաստացի մարման օրը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները գանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 27-ի որոշման դեմ հայցվոր «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Վահան Ավետիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ 2017թ. օգոստոսի 25-ին հայց է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ Դատարան/ ընդդեմ Գագիկ Յուրիի Հայրապետյանի և Մերուժան Հրաչիկի Բաբայանի՝ 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Դատարանի 2017թ. օգոստոսի 28-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել քաղաքացիական գործ և նշանակվել դատաքննության:

Դատարանի 2017թ. հոկտեմբերի 5-ի վճռով հայցը բավարարվել է:

Պատասխանող Մերուժան Բաբայանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ Դատարանի 2017թ. հոկտեմբերի 5-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2018թ. փետրվարի 2-ին Հայցվորը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ խնդրելով բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2017թ. հոկտեմբերի 5-ի վճռին:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել պատասխանող Մերուժան Բաբայանը և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, Արցախի Հանրապետության Սահմանադրության 6-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի ու 79-րդ հոդվածի դրույթները, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, 229-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 230-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները, ինչի արդյունքում վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարել է և գործն ուղարկել Դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Բողոք բերած անձը նշված պնդումները հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը և գործն ուղարկելով նոր քննության, դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ պատասխանող Մ.Բաբայանի բողոքի հիմքերը վերաբերվել են միայն այն փաստերին, որոնց ուժով ինքը գործով պատասխանող հանդիսանալ չի կարող, և Հայցվորն էլ իր նկատմամբ վնասի հատուցման հետադարձ պահանջի իրավունք ձեռք բերել չի կարող:

Բողոքաբերը գտնում է, որ թեև պատասխանող Մ.Բաբայանն իր վերաքննիչ բողոքում ոչ միայն չի վիճարկել, այլև ընդունել է հատուցման գումարը տուժողին փոխանցելու հանգամանքը, սակայն Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քննության առարկա է դարձրել հատուցման գումարը «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի աշխատակազմի ղեկավար Է.Գրիգորյանին փոխանցելու հարցը, ինչը Դատարանի վճռով նույնպես չի վիճարկվել:

Վերաքննիչ դատարանը, դուրս գալով իր իրավասությունների սահմաններից, ինքնուրույն որոշել է, թե տվյալ դեպքում գործը նոր քննության ուղարկելու համար ինչ փաստեր կարելի է վիճարկել, որպեսզի բողոքաբերը նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորություն ունենա: Դեռ ավելին, պատասխանող Գագիկ Հայրապետյանի կողմից Դատարանի վճիռը

վերաքննության կարգով չբողոքարկվելու պարագայում, դատական ակտը բեկանվել է նաև նրա մասով:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել բողոքարկվող գործով Վերաքննիչ դատարանի 2017թ. դեկտեմբերի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2017թ. հոկտեմբերի 5-ի վճռին, ինչպես նաև անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Պատասխանող Մ.Բաբայանը և նրա ներկայացուցիչ Ա.Մադայանը վճռաբեկ բողոքի պատասխանում նշել են, որ բողոքաբերի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար, և որ Վերաքննիչ դատարանի որոշումն ուղղված է գործում առկա հակասությունների վերացմանը և այնպիսի հանգամանքների պարզաբանմանը, որոնք հնարավորություն կտան ըստ էության վերջնական դատական ակտ կայացնելու: Հետևաբար, վճռաբեկ բողոքի պատասխանում խնդրել են բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 2017թ. մայիսի 2-ին, ժամը 22:00-ի սահմաններում, Ստեփանակերտ քաղաքի Շ.Դանիելյան և Մարտունի փողոցների խաչմերուկում «Volkswagen Passat» մակնիշի 17 SU 617 համարանիշի /վարորդ՝ Գագիկ Յուրիի Հայրապետյան/ և «Hyundai Tucson» մակնիշի 040 LL 90 համարանիշի /վարորդ՝ Վյաչեսլավ Շահենի Սարգսյան/ ավտոմեքենաների բախման պատճառով տեղի է ունեցել պատահար:

2. Համաձայն ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության պետի 2017 թվականի հունիսի 6-ի գրությունների՝ «Volkswagen Passat» մակնիշի 17 SU 617 համարանիշի ավտոմեքենան հաշվառված է Մերուժան Հրաչիկի Բաբայանի, իսկ «Hyundai Tucson» մակնիշի 040 LL 90 համարանիշի ավտոմեքենան՝ «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ»-ի անունով:

3. Համաձայն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի տվյալների՝ պատահարի պահին «Volkswagen Passat» մակնիշի 17 SU 617 համարանիշի ավտոմեքենայի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագիր առկա չի եղել, իսկ «Hyundai Tucson» մակնիշի 040 LL 90 համարանիշի ավտոմեքենան /այսուհետ՝ նաև Ավտոմեքենա/ ունեցել է ԱՊՊԱ պայմանագիր՝ կնքված «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ:

4. ԱՀ ոստիկանության ՃՈ ՊՎՀ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության մայրը Լ.Ասրյանի կազմած և 2017թ. մայիսի 12-ին ԱՀ ոստիկանության ՃՈ պետ Ի.Օհանյանի կողմից հաստատված եզրակացությամբ «Volkswagen Passat» մակնիշի 17 SU 617 համարանիշի ավտոմեքենայի վարորդ Գագիկ Հայրապետյանը համարվել է պատահարի մեղավոր և ենթարկվել վարչական պատասխանատվության:

5. 2017թ. մայիսի 22-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության ներկայացուցիչ Էրիկ Գրիգորյանը /այսուհետ՝ նաև տուժող/ դիմել է «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ վնասների հատուցում ստանալու խնդրանքով:

6. «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ Հայցվորի անունից, 2017թ. մայիսի 30-ին ընդունել է տուժողին հատուցում վճարելու վերաբերյալ որոշում:

7. Հայցվորը և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրականացրել են հատուցման առնչությամբ փոխադարձ հաշվարկներ:

8. Տեղի ունեցած պատահարի արդյունքում տուժողին, իրոք, պատճառվել է գույքային վնաս և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ի ղեկավար Էրիկ Գրիգորյանին վճարվել է 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որպես հատուցում:

9. Մերուժան Բաբայանի անունից 2017թ. նոյեմբերի 10-ին ներկայացված վերաքննիչ բողոքում Դատարանի վճիռը բողոքարկվել է հետևյալ հիմքերի սահմաններում.

ա/ Դատարանը մերժել է դատաքննությունը վերսկսելու իր միջնորդությունը, պատճառաբանելով, որ պատասխանող կողմը չի հիմնավորել իր անհամաձայնությունը գործում առկա փորձագիտական եզրակացության հետ ,

բ/ Դատարանն անտեսել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ հաստատված այն փաստը, որ պատահարի պահին Ավտոմեքենան պատկանել է Արամ Դանիելյանին և այդ առումով Դատարանը չի ընդունել ու գործին չի կցել Մերուժան Բաբայանի և Արամ Դանիելյանի միջև ավտոմեքենայի առուվաճառքի գործարքը հաստատող փաստաթուղթը,

գ/ Դատարանը պետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1077-րդ հոդվածի 2-րդ մասը, որը հիմք է՝ առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջը վնասը հատուցելու պարտականությունից ազատելու համար,

դ/ Ավտոմեքենային պատճառված վնասի գնահատված չափն անհիմն ուռճացված է,

ե/ Հայցվորը գործով իրականացված հատուցման գործընթացին իրեն մասնակից չի դարձրել:

10. Մ.Բաբայանի վերաքննիչ բողոքի խնդրամասում նշվել է հետևյալը. «Մույն վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Բավարարել վերաքննիչ բողոքս, մասնակիորեն /Մերուժան Բաբայանի մասով/ բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի թիվ 2624/02/17թ. առ 05.10.2017թ. վճիռը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը Մերուժան Բաբայանից համապարտության կարգով գումար բռնագանձելու մասով մերժելու մասին կամ գործը վերադարձնել նույն դատարան՝ նոր քննության»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն որոշման շրջանակներում Գերագույն դատարանն անդրադառնում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու ԼՂՀ օրենքում /այսուհետ՝ Օրենք/ օգտագործվող «տուժող» հասկացությանը, նրա իրավական կարգավիճակին, ապացույցների գնահատման իրավական ինստիտուտին և վերաքննության սահմաններին առնչվող մի քանի հարցերի, որոնք ծագել են Դատարանի վերաքննությամբ բողոքարկված դատական ակտի եզրահանգումների օրինականության և հիմնավորության ստուգման ընթացքում:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ տուժողը /տուժած անձը/ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով նույն Օրենքով նախատեսված անձնական կամ գույքային պատճառով վնասներ կրած ցանկացած անձ է, որը սահմանված կարգով ունի հատուցման իրավունք:

Գերագույն դատարանը փաստում է, որ վերոնշյալ հոդվածի իմաստով «տուժող» հասկացության տակ պետք է նկատի ունենալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Դրա հետ մեկտեղ, «տուժող» եզրույթը պետք է հասկանալ ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական առումով: Տվյալ դեպքում՝ տուժողի իրավական կարգավիճակը կարգավորվում է նրա փաստական դրությամբ, անկախ այն բանից՝ դատավարության որևէ տեսակի սուբյեկտ ճանաչվել է, թե ոչ: Ակնհայտ է, որ քննարկվող հոդվածում օրենսդիրը վնասը բաժանել է երկու տեսակի՝ անձնական և գույքային, իսկ տուժողներին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Գործի նյութերից նկատելի է, որ պատահարի հետևանքով ճանապարհատրանսպորտային պատահարի պահին «Hyundai Tucson» մակնիշի 040 LL 90 համարանիշի ավտոմեքենան հաշվառված էր «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի աշխատակազմում, որի ղեկավարն էրիկ Գրիգորյանն է: Պատահարի հետևանքով Ավտոմեքենային պատճառով վնասի չափը կազմել է 2.605.750 /երկու միլիոն վեց հարյուր հինգ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, իսկ Ավտոմեքենայի վարորդ Վյաչեսլավ Սարգսյանին պատճառված անձնական վնասը դասվում է առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքների շարքին: Այստեղից հետևում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով գույքային վնասը պատճառվել է «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ին, և վերջինս էլ Օրենքի իմաստով հանդիսանում է տուժող /տուժած անձ/:

Համաձայն Օրենքի 8-րդ և 49-րդ հոդվածների պահանջների՝ Հայցվորը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար տուժած անձանց պատճառված գույքային վնասները

հատուցում է մինչև 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Նման պայմաններում «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ի ղեկավար Էրիկ Գրիգորյանը, հատուցում ստանալու նպատակով, գործել է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ԼՂՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ ստանալով հիմնարկի գույքին պատճառված 1.500.000 դրամի չափով նյութական վնասը: Այդ հանգամանքը հաստատվում է հայցադիմումին կից ներկայացված՝ առ 09.06.2017թ. թիվ 13565 վճարման հանձնարարագրի էլեկտրոնային պատճենի գննությամբ, որից նկատելի է, որ Հայցվորը «Կոնվերսանկ» ՓԲԸ-ի միջոցով ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հաշվեհամարին փոխանցել է մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ, և շահառու Էրիկ Գրիգորյանը ստացել է նշված գումարը:

Հետևաբար, անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ իբր «ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ին որևէ հատուցում չի տրվել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ նաև Օրենսգրքի/ 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նույն Օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության հիման վրա Գերագույն դատարանն արձանագրում է, որ Դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար:

Տվյալ դեպքում Գերագույն դատարանը փաստում է, որ Դատարանը հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը դիտարկել է որպես թույլատրելի ապացույցներ և Օրենսգրքի 49-րդ հոդվածի ուժով դրանք գնահատել մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Ուստի ԸԻԴ 0796/02/12թ. քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2013թ. հուլիսի 4-ի դատական ակտով արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնք վերաբերվում են ապացույցների գնահատմանը և որոնց վրա հղում է կատարել Վերաքննիչ դատարանը, սույն գործով կիրառելի չեն:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական այս նորմը սահմանում է իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց իրավասությունների իրացման շրջանակը՝ բացառելու համար իշխանության չարաշահումը կամ իշխանազանցությունը:

Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Դատավարական այս նորմը կանխատեսում է վերաքննության կարգով դատական ակտի վերանայման օբյեկտային սահմանները՝ նախանշելով, որ Վերաքննիչ դատարանը կարող է վերանայել միայն դատական ակտի բողոքարկված մասը, այն հիմքերի և հիմնավորումների շրջանակներում, որոնք ներկայացվել են վերաքննիչ բողոքում, այն պահանջների մասով, որոնք Դատարանում հանդիսացել են քննության առարկա, և որոնց վերաբերյալ Դատարանը վճիռ է կայացրել:

Քննարկվող գործով պատասխանող Մ.Բաբայանի վերաքննիչ բողոքը վերաբերվել է սույն որոշման 3-րդ մասի /Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը/ 9-րդ կետում նշված հիմքերին և հիմնավորումներին:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն, անտեսելով վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները և խախտելով Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, դուրս է եկել վերաքննության սահմաններից և քննության առարկա դարձրել «վերաքննիչ բողոքում վիճարկված և Վերաքննիչ դատարանի կողմից հաստատված» այն փաստը, որ «տեղի ունեցած պատահարի արդյունքում տուժողին, իրոք, պատճառվել է գույքային վնաս և «Նաիրի Ինչուրանս» ԱՊՊԱ ընկերության կողմից ֆիզիկական անձ Էրիկ Գրիգորյանին վճարվել է 1.500.000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որպես հատուցում»: Այդ այն դեպքում, երբ Պատասխանողն իր վերաքննիչ բողոքում Էրիկ Գրիգորյանի կողմից հատուցում ստանալու մասին որևէ կերպ չի անդրադարձել և դատական նիստում նման հայտարարություն չի արել:

Այդ առումով Գերագույն դատարանն արտահայտում է այն իրավական դիրքորոշումը, որ Վերաքննիչ դատարանը, վերանայելով դատական ակտը, վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում չի կարող դնել հանգամանք, որի վերաբերյալ բողոք բերողը պահանջ չի ներկայացրել և Դատարանում որևէ դիրքորոշում չի հայտնել:

Անդրադառնալով Օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Վերաքննիչ դատարանը, նոր ապացույց ընդունելու չափանիշների հարցում, պետք է ելնի նրանից, որ նոր ներկայացվող ապացույցը պետք է նշանակություն ունենա գործի լուծման համար, նոր ներկայացվող ապացույցը Դատարանում գործի քննության ընթացքում պետք է օբյեկտիվորեն առկա եղած լինի և նոր ներկայացվող ապացույցը Դատարանում գործի քննության ընթացքում պետք է ներկայացված չլինի կողմերի կամքից անկախ պատճառներով:

Իրավական փաստերի հաստատման բնագավառում Վերաքննիչ դատարանի լիազորություններն ամրագրված են Օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում, որոնց դրույթները բողոքարկվող որոշման մեջ նշված՝ Վերաքննիչ դատարանի «հաստատած փաստի» եզրահանգման առումով նույնպես կիրառելի չեն:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր քննության առնել պատասխանող Մ.Բաբայանի վերաքննիչ բողոքում ներկայացված բոլոր հիմքերը և եզրահանգումներ անել դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվա-

ծության վերաբերյալ, այլ ոչ թե գործի լուծման համար նշանակություն չունեցող մտացածին հիմքով բեկաներ Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված նյութական ու դատավարական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վերոնշյալ հիմնավորմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել Օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու Գերագույն դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**